Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 464 - Ա որոշման

«Վերականգնողական կենտրոն»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ռազմական գործողությունների հետևանքով և/կամ զինվորական ծառայության ընթացքում վիրավորում ստացած և/կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների համար վերականգնողական կենտրոնի կառուցում: Ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողները կամ նրանց ընտանիքի անդամները Վերականգնողական կենտրոնի ծառայություններից օգտվելու են անվճար հիմունքներով: Նման կենտրոնը հագեցած է լինելու հատուկ մարզասարքերով, որոնց օգտագործումը կնպաստի շահառուների առողջության ամրապնդմանը և ֆիզիկական ակտիվության վերականգնմանը, բարձրացմանն ու պահպանմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքեր և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հիմնադրամների, ոչ առևտրային կազմակերպությունների ու անհատ բարերարների (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) կողմից հանգանակած միջոցների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Իսակովի պողոտա, 11 Ա շենք, ՀՎՀՀ՝ 02283677)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, քաղ. Երևան, Անդրանիկի 40/3, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	308,8 մլն դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի Հանրապետության Հաշմանդամային Սպորտի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (գրանցման համար՝ 211.171.1020163, ՀՎՀՀ՝ 00477391)

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 2-ից 2022 թվականի դեկտեմբերի 2-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ 1. Քաղաքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Հաշմանդամային Սպորտի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը նվիրաբերված Երևան քաղաքի Անդրանիկի 40/3 հասցեում գտնվող շենքի վերակառուցում՝ վերականգնողական կենտրոնի՝ նախատեսվող ծախսերը՝ շուրջ 200 մլն դրամ, ժամկետը՝ 2021 թվականի հուլիսի 2-ից 2022 թվականի դեկտեմբերի 2-ը: 2. Անհրաժեշտ մարզագույքի ձեռքբերում և ներմուծում՝ շուրջ 100 մլն դրամի, ժամկետը՝ 2021 հուլիսի 2-ից 2021 թվականի նոյեմբերի 30-ը: 3. Կազմակերպական ծախսեր՝ կոմունալ վճարներ և գրասենյակային ծախսեր՝ շուրջ 8,8 մլն դրամ, ժամկետը՝ 2021 թվականի հուլիսի 2-ից 2022 թվականի դեկտեմբերի 2-ը :
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շենքի ամբողջությամբ վերակառուցում, որն իր մեջ ներառելու է ամրացման, երկրորդ հարկի կառուցման, տանիքի կառուցման, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման, ջրահեռացման, ընդհանուր շինվերանորոգման, բարեկարգման աշխատանքներ՝ շուրջ 200 մլն դրամ: Մարզասարքերի ու մարզագույքի ձեռքբերում և ներմուծում՝ շուրջ 100 մլն դրամ: Կազմակերպական ծախսեր՝ շուրջ 8,800,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	- կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 8,5 մլն դրամ (ամսական 500,000 դրամ), - գրասենյակային ծախսեր՝ 300,000 դրամ (տարեկան 200,000 դրամ):
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ առողջապահության նախարարության հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

11.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ